

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅ



Համագործակցության հուշագիր

ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանն այցելել է Արագածավան համայնքի գյուղատնտեսական և անասնաբուժական սպասարկման կենտրոն: Նախարարը «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» (CARD) հիմնադրամի տնօրեն Գագիկ Սարգսյանի և «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ տնօրենի պաշտոնակատար Գեղամ Գևորգյանի ուղեկցությամբ շրջել է կենտրոնում, զրուցել կենտրոնի աշխատակիցների և անասնաբույժների հետ: Այնուհետև նախարար Իգնատի Առաքելյանն այցելել է «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» (CARD) հիմնադրամ, ծանոթացել կենտրոնի ընթացիկ աշխատանքներին:

Շրջայցից հետո ՀՀ գյուղատնտեսության նախարարության և CARD հիմնադրամի միջև ստորագրվել է համագործակցության հուշագիր: Հուշագրի համաձայն՝ նախատեսվում է ստեղծել աշխատանքային խումբ, որը կմշակի գործուն մեխանիզմներ «Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի պատվաստումների աշխատանքների որակի բարձրացման, մատուցվող ծառայությունների բարելավման, անասնապահությանը զբաղվող տնտեսությունների իրազեկվածության աշխատանքների կազմակերպման հարցերում: «Հուշագրով պետական ծրագրով իրականացվող պատվաստումների գործառնությունն այսուհետ իրականացվելու է CARD հիմնադրամի հետ համատեղ, և ես համոզված եմ, որ այս համագործակցությունը շատ հաջողված կլինի: «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակում, ստեղծվել են գյուղատնտեսական և անասնաբուժական սպասարկման կենտրոններ, վերապարտաստվել են անասնաբույժներ, և մենք այսօր ունենք մի հարթակ, որը կարող ենք առավել արդյունավետ օգտագործել. պետական պատվաստումների ծրագիրը բարձր մակարդակով իրականացնելու համար՝ տարեցտարի լրացնենք բացերը, կատարելագործենք համակարգը՝ աստիճանաբար այդ գործառնությունը պետությունից պատվիրակելով մասնավոր հատվածին: Պետությունը հուշագրի ստորագրմամբ ընդգծում է իր պատրաստակամությունը, մասնավոր հատվածի հետ համագործակցելով, զարգացնել ցանկացած ուղղություն», - նշել է նախարար Իգնատի Առաքելյանը:

Նախարարը հույս է հայտնել, որ CARD հիմնադրամի հետ համագործակցության արդյունքում այն 2018 թվականին գյուղատնտեսական կենդանիների պատվաստումները կիրականացվեն առավել թափանցիկ և արդյունավետ նոր ծրագրով: Իգնատի Առաքելյանը տեղեկացրել է, որ առաջիկայում նախատեսվում է իրականացնել գյուղատնտեսական կենդանիների համարակալման ծրագիր:

Իր հերթին Գագիկ Սարգսյանն ընդգծել է, որ CARD հիմնադրամը կշարունակի աջակցություն ցուցաբերել ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը ոլորտում առաջնահերթ ծրագրերի իրականացման ուղղությամբ: Իր խոսքում նա հավաստիացրել է, որ անասնաբուժական սպասարկման բոլոր կենտրոնները հագեցած են ժամանակակից սարքավորումներով և համալրված բարձրակարգ մասնագետներով՝ անասնաբուժական և անասնաբուժական տարբեր ծրագրեր իրականացնելու համար:

ԽՈՐՀՐԴԱԿՅՈՒԹՅՈՒՆ

120 մլն դոլարի ներդրում ոլորտում

ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանը աշխատանքային խորհրդակցություն էր հրավիրել՝ քննարկելու ընթացիկ տարում գյուղօլորտում ներդրումային ծրագրերի իրականացմանն առնչվող հարցեր:

Խորհրդակցությանը մասնակցում էին նախարարի տեղակալներ՝ Ռոբերտ Մակարյանը, Աշոտ Հարությունյանը, Արմեն Հարությունյանը, նախարարության աշխատակազմի ղեկավար Արտաշես Կիրակոսյանը, «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակի» տնօրենի պաշտոնակատար Գեղամ Գևորգյանը: «Ամփոփելով կատարված աշխատանքները՝ կարող ենք արձանագրել, որ 2017 թվականին գյուղատնտեսության ոլորտում, ընդհանուր առմամբ իրականացվելու են շուրջ 120 մլն դոլարին համարժեք դրամի ծրագրեր, ներառյալ այն 60 մլն դոլարը, որի վերաբերյալ օրենս հայտարարեց Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Օրենս վարչապետ Կարեն Կարապետյանն այցելել էր Արմավիրի մարզ: Այցելելով Արմավիրի պահածոների նախկին գործարան՝ նա ծանոթացել է գործարանի վերագործարկման ծրագրերին: «Սարգիս-Կարուխնա» ընկերությունը նախատեսում է առաջիկայում գործարանում իրականացնել վերակառուցման աշխատանքներ և կազմակերպել մեծածավալ մթերումներ: Գործարանում նախատեսվում է նաև կազմակերպել մանկական կերերի արտադրություն: Ծրագրի ներդրումային ծավալն, ընդհանուր առմամբ, կկազմի 7-8 մլն ԱՄՆ դոլար: Վարչապետ Կարապետյանը ողջունել է վերը նշված ներդրումային ծրագրերի իրականացումը և նշել, որ կառավարությունն անհրաժեշտության դեպքում, պատրաստ է տարբեր միջոցներով ցուցաբերել օժանդակություն:

Արմավիրի մարզպետարանում Կարեն Կարապետյանը հանդիպել է նաև մարզի համայնքների ղեկավարների ու գործարարների հետ, քննարկել խնդիրներն ու զարգացման հնարավորությունները: Կառավարության ղեկավարը նշել է, որ այցի նպատակն է՝ քննարկել մարզի զարգացման ծրագրերը: Վարչապետի խոսքով կառավարության գործունեության 100 օրվա ընթացքում ախտորոշվել են տարբեր ոլորտների խնդիրները և ամփոփվել կատարված աշխատանքները: «Ունենալով յուրաքանչյուր ճյուղի զարգացման ծրագիրը՝ դրա հիման վրա էլ կարող ենք կառուցել երկրի զարգացման ռազմավարությունը: Այսօր ակնկալում ենք բաց, պրագմատիկ, գործնական խոսակցություն, որպեսզի մարզերի մեր գործընկերները ներկայացնեն զարգացման իրենց տեսլականը, առավելությունները, խնդիրները, պայմանավորվեք, թե ուր ենք գնում», - նշել է վարչապետը: Կարեն Կարապետյանը տեղեկացրել է, որ կառավարությունում ամփոփվել են հինգ մարզերի այցերը, ստացված 44 ծրագրերից 34-ին տրվել է ընթացք: Գործադիրի ղեկավարի խոսքով՝ նման աշխատանքները կրելու են պարբերական բնույթ: Մարզպետ Աշոտ Ղահրամանյանը ներկայացրել է մարզի սոցիալ-տնտեսական իրավիճակը, իրականացվող ծրագրերն ու արձանագրված ձեռքբերումները, հիմնախնդիրները և հետագա անելիքները: Մարզպետը նշել է, որ մարզի 97 համայնքներից 87-ի զարգացման հնգամյա ծրագրերն արդեն իսկ հաստատվել են, այժմ ընթացքի մեջ են 2017-2025 թվականների մարզի զարգացման ռազմավարության մշակման աշխատանքները՝ հաշվի առնելով Արմավիրի ուժեղ և թույլ կողմերը, խնդիրներն ու հնարավորությունները: Մարզպետի տեղեկացմամբ, Արմավիրում ընթացքի մեջ են գրեթե 150 մլրդ դրամի ծրագրեր, ևս 50 մլրդ դրամի ծրագիր նախատեսվում է իրականացնել 2017-ին: Ընթացքի մեջ գտնվող ծրագրերն ուղղված են գյումթերի վերամշակմանը, խտանյութերի արտադրությանը, ջրամակառարարման համակարգերի վերակառուցմանը, փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանը, աղբի վերամշակմանը, բամբակի, կարի արտադրությունների հիմնական, Էներգետիկայի, ոսկեգործության, զբոսաշրջության և այլ ոլորտներին: Մարզի գյուղատնտեսության ոլորտի պատասխանատուն տեղեկացրել է, որ Արմավիրում առկա 97 հազար հեկտար գյուղատնտեսական նշանակության հողատարածքներից մշակվում է 48 հազարը, ինչը 2015 թվականի համեմատ, ավելի է 18 հազար հեկտարով: Կառավարության ղեկավարը հետաքրքրվել է՝ մարզում կա՞ն ժամանակակից ֆերմերային տնտեսություններ, որոնք կիրառում են կաթիլային ոռոգման համակարգ: «Մենք գյուղատնտեսությունում որոշակիորեն ոչ ճիշտ ուղղություն ենք ընտրել՝ տեսական հիմք ընդունելով այն, թե յուրաքանչյուր գյուղացի լավ գյուղատնտես է: Գյուղացի կա, որը լավ գյուղատնտես չէ, նա ուսում չի ստանում, չի փորձում հասկանալ նոր մեթոդները, իսկ մենք սուբսիդավորման ծավալներն ավելացնում ենք, սակայն որակ չենք փոխում: Այդ առումով, ձեր նպատակը պետք է լինի ուսումնական դասընթացների կազմակերպումը ագրարային համալսարանի միջոցով: Միշտ չէ, որ պապական ձևով հող մշակելու դեպքում այն լավ բերք է տալիս», - ընդգծել է կառավարության ղեկավարը: Անդրադառնալով գյուղտեխնիկայի խնդրին՝ վարչապետը տեղեկացրել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը բանակցություններ է վարում մատակարարների հետ գյուղտեխնիկա ներկրելու նպատակով:

Կոոպերացիա

Էջ 4

Համայնքային

Էջ 6

Մասնագետի խորհուրդը

Էջ 7

ԽՈՐՀՐԴԱԿՈՒԹՅՈՒՆ

120 մլն դոլարի ներդրում ոլորտում

Ներդրումները կուղղվեն պահածոների գործարանի, սպանդանոցների կառուցմանը, ջերմատնային տնտեսությունների ընդլայնմանը, ինտենսիվ այգիների հիմնմանը, կոնյակի արտադրության վերագինմանը և այլ ոլորտների: Սրան կավելանան նաև մարզերի զարգացմանն ուղղված ծրագրերը, որոնց շուրջ այս պահին ինտենսիվ աշխատանքներ ենք տանում», - նշել է Նախարար Իգնատի Առաքելյանը:

Նախարարը հանձնարարել է պատասխանատուներին վերահսկողություն սահմանել իրենց համակարգման ներքո գտնվող ծրագրերի իրականացման նկատմամբ, ընթացքում առաջացող խնդիրներին լուծումներ տալ, կատարված ծրագրերի շուրջ ապահովել իրազեկում՝ խրախուսելու հավելյալ ներդրումներին ներհույսը:

Խորհրդակցության ընթացքում քննարկվել են գյուղօլորտի զարգացմանն ուղղված մի շարք այլ հարցեր ևս, պատասխանատուներին տրվել են համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ:

Կարկտահարության վնասների կանխարգելում

ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանը հրավիրել էր խորհրդակցություն՝ բնակլիմայական աղետների, մասնավորապես կարկտահարության վնասների կանխարգելմանն ուղղությամբ իրականացվելիք առաջիկա քայլերը քննարկելու նպատակով:

Քննարկմանը մասնակցում էին ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի ժամանակավոր պաշտոնակատար Հայկարամ Մխիթարյանը, ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Աշոտ Հարությունյանը, ՀՀ ԱԻՆ «ՄԵՎԱՆԾ» ՊՈԱԿ-ի տնօրեն Ռոբերտ Հովսեփյանը:

«Մեր երկրում գյուղատնտեսությունն ամեն տարի մեծ վնասներ է կրում կարկտահարության պատճառով, և այժմ օրաօրվա հարցերից է դրա դեմ պայքարի առավել արդյունավետ մեթոդների կիրառումը: Այդ նպատակով նախարարությունը մշակել է բնակլիմայական աղետներից վնասների կանխարգելման հայեցակարգի նախագիծ, ցանկալի է լսել բոլոր նկատառումները, համատեղ քննարկել ու լուծման ուղիներ գտնել առկա խնդիրների ուղղությամբ», - նշել է Նախարար Առաքելյանը:

Ներկայացնելով հանրապետության հակակարկտային կայանների ցանցի տեխնիկական իրավիճակը, արդյունավետությունը, կառավարման և սպասարկման ընթացքում ծագող խնդիրները՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության պաշտոնյաներն ընդգծել են, որ պայքարի մեկ եղանակի ընտրությունը, մասնավորապես հանրապետության ամբողջ տարածքը հակակարտային կայանների ցանցով ծածկելը նպատակահարմար չէ և չի կարող բավարար արդյունավետությունն ապահովել՝ առաջարկելով ըստ գոտիականության տեղադրել նաև հրթիռային կայաններ, իսկ առավել արժեքավոր գյուղատնտեսական մշակաբույսերի պահպանության նպատակով հակակարկտային ցանցեր կիրառել:

Խորհրդակցության ընթացքում կարևորվել են մի շարք հարցեր, այդ թվում՝ դոտացիոն ֆոնդի հաշվին հակակարկտային կայանների կենտրոնացված սպասարկման անհրաժեշտությունը, համայնքային և մասնավոր սեփականություն հանդիսացող կայանների տեղադրումը, լիազոր մարմնի հետ պարտադիր կերպով համաձայնեցնելը, գործող ցանցի տեխնիկական վերագինումը և այլն:

Քննարկումների արդյունքում որոշվել է ուսումնասիրել կարկտահարության դեմ պայքարի հրթիռային կայանների կիրառման միջազգային առաջավոր փորձը, Հայաստանում դրա ներդրման և տեղում արտադրություն կազմակերպելու հնարավորությունները, քարտեզագրել հանրապետության պահպանության տարածքները՝ ըստ տվյալ տարածքի համար առավել նպատակահարմար հակակարկտային եղանակների կիրառմամբ, ինչպես նաև ներկայացնել պահանջվող ներդրումների ֆինանսական գնահատականը՝ 2018 թվականի ՀՀ պետական բյուջեում համապատասխան միջոցներ նախատեսելու նպատակով:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

ՀՀ-ում Բուլղարիայի դեսպանը գյուղատնտեսության նախարարությունում

ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանն ընդունել է ՀՀ-ում Բուլղարիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Մարիա Պավլովա Ցոցորկովա-Կայմակչևային: Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են երկու երկրների միջև գյուղատնտեսության ոլորտում փոխգործակցությունն ընդլայնելու և գործարար կապերն աշխուժացնելու հնարավորությունները:

ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանը հայտնել է հայկական կողմի պատրաստակամությունը ուսումնասիրել փոխշահավետ բիզնես-առաջարկները:

Ներկայացնելով Բուլղարիայի հաջող փորձը ագրարային բնագավառի մի շարք ճյուղերում՝ որպես փոխգործակցության հնարավոր և առավել հեռանկարային ուղղություններ դեսպանն առանձնացրել է մասնավորապես՝ բուսա-



բուծության, անասնապահության, սննդամթերքի անվտանգության, գինեգործության, օրգանական գյուղատնտեսության, ջերմատնային բիզնեսի զարգացման և անտառների կառավարման ոլորտները:

Տեղեկացնելով, որ այսօր ՀՀ-

յաստանում քայլեր են ձեռնարկվում անտառային ռեսուրսների կառավարման համակարգի բարեփոխման ուղղությամբ՝ Նախարար Իգնատի Առաքելյանը նշել է, որ այս հարցում Բուլղարիայի փորձը կարող է օգտակար լինել Հայաստանի համար:

Քննարկվել են համագործակցության հնարավորությունները

ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանն ընդունել է «PUM» Նիդերլանդների ավագ փորձագետների հիմնադրամի Հայաստանի համակարգող Ալբերտ Ուեսթերինգսին՝ գյուղատնտեսության ոլորտում համագործակցության շրջանակների ընդլայնման հնարավորությունները քննարկելու նպատակով: Հանդիպմանը ներկա էին նաև ՀՀ գյուղատնտեսության անվտանգության ծառայության պետ Իշխան Կարապետյանը, նաև ոլորտի այլ պատասխանատուներ:

Նիդերլանդների կառավարության կողմից ֆինանսավորվող այս կազմակերպությունը կոչված է նպաստել ձեռնարկատիրության և աշխատատեղերի ստեղծման միջոցով փոքր և միջին ձեռնարկությունների կայուն զարգացմանը, աջակցել գործարարությանը զարգացող երկրներում և շուկաներում: PUM-ն աջակցում է ձեռներեցներին տեխնիկական միջոցներով, իրականացնում է կարծաժամկետ խորհրդատվական առաքելություններ ավագ գործարարների ու վերլուծաբանների, կամավորների կողմից՝ ապահովելով գործնական գիտելիքներով և փորձառությամբ: «Հայաստանում գյուղատնտեսության ոլորտի հետագա զարգացման համար անհրաժեշտ են

բարձրակարգ մասնագետներ, և հուսով եմք, որ հայ մասնագետների վերապատրաստման հարցում ձեր կազմակերպությունը կարող է մեզ մեծ օժանդակություն ցուցաբերել», - նշել է Նախարար Իգնատի Առաքելյանը:

Իր հերթին Ալբերտ Ուեսթերինգսը նշել է, որ գյուղատնտեսության ոլորտը գտնվում է «PUM» հիմնադրամի ուշադրության կենտրոնում և պատրաստակամություն է հայտնել աջակցել Հայաստանում խորհրդակցությունների և սեմինարների կազմակերպմանն ուղղությամբ:

Նկատի ունենալով Նիդերլանդների Թագավորության հաջող փորձն ագրարային բնագավառի տարբեր ճյուղերում՝ Նախարար Իգնատի Առաքելյանն առաջարկել է հոլանդացի փորձագետների ներգրավմամբ ուսումնասիրել մեղվաբուծության ոլորտում համագործակցության հնարավորությունը՝ հետագայում փոխգործակցության շրջանակներն ընդլայնելու հեռանկարով:

Հանդիպման ընթացքում քննարկվել են արտասահմանյան շուկաներում հայկական արտադրանքի մրցունակության բարձրացմանը, մարքեթինգի իրականացմանը վերաբերող և այլ հարցեր:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Զարգացումներ կրթական ծրագրերում

ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանը մասնակցել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ագրոբիզնեսի դեսպարտամենտի «Սննդի անվտանգության համակարգերի կառավարում» կրթական ծրագրի մասնակիցներին ավարտական հավաստագրերի հանձնման արարողությանը: Միջոցառմանը ներկա էին նաև ՀՀ գյուղատնտեսության անվտանգության պետական ծառայության պետ Իշխան Կարապետյանը, ՀՀ-ում ԱՄՆ ՄԶԳ տնօրեն Դեբորա Գրիգերը, ՀԱՄԶ ղեկավար Արշալույս Թարվերդյանը, դասախոսներ, ոլորտի այլ ներկայացուցիչներ:

Շնորհավորելով դասընթացի մասնակիցներին և ողջունելով նման դասընթացներ կազմակերպելու նախաձեռնությունը՝ Նախարարը հույս է հայտնել, որ ԱՄՆ ՄԶԳ-ն և ԱՄՆ կառավարությունը կշարունակեն Հայաստանում հանդես գալ նոր ծրագրերով՝ ուղղված ագրարային կրթության զարգացմանը: «Կրթությունը շատ մեծ նշանակություն ունի բոլոր ոլորտների հետևողական զարգացման համար, և մեզ համար այսօր առաջնահերթ է բարձրակարգ մասնագետներ ունենալը: Շատ կարևոր է նաև, որպեսզի այս դասընթացների ընթացքում ձեռք բերված գիտելիքները դուք կարողանաք պրակտիկայում կիրառելի դարձնել և նոր մշակույթ բերել մեր իրականությանը: Սննդամթերքի անվտանգությունը, սննդի որակի ապահովումը միշտ լինելու է մեր ուշադրության կենտրոնում և վստահաբար, որքան այս ոլորտում շատ լինեն լավ մասնագետները, այդքան արագ մենք կհասնենք հաջողության», - նշել է Նախարարը: Նախարարը տեղեկացրել է, որ ՀՀ գյուղատնտեսության անվտանգության պետական ծառայությունը պատրաստակամություն է հայտնել դասընթացն ավարտած լավագույն ուսանողներին աշխա-

տանքի հնարավորություն ընձեռել:

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ղեկավար Արշալույս Թարվերդյանն իր հերթին, ողջունելով միջոցառման մասնակիցներին, նշել է, որ ժամանակակից պահանջներից ելնելով՝ անհրաժեշտություն է առաջացել փոփոխություններ և զարգացումներ մտցնել նաև ագրարային համալսարանի կրթական ծրագրերում, և այս առումով իրենք մեծ արդյունքներ են ակնկալում հատկապես միջազգային համագործակցության շրջանակում իրականացվող ծրագրերից: Այս համատեքստում ղեկավարը բարձր է գնահատել համագործակցությունն ԱՄՆ ՄԶԳ-ի և Ինստիտուտի Հայաստանի նախագծի հետ, որը հնարավորություն ստեղծեց կապեր հաստատել Փենսիլվանիայի նահանգային համալսարանի և Վիրջինիա Թեք համալսարանի հետ և մշակել խտացված, արագացված ծրագրերի մոդուլ՝ 6 առանձին բաղադրիչներով, որը հունվար ամսվա ընթացքում իրականացվեց ագրարային համալսարանում: ՀԱՄԶ Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնի ուսանողների համար նախատեսված մեկամսյա ինտենսիվ դասընթացն իրականացվել է ԱՄՆ ՄԶԳ (USAID) և Ինստիտուտի/ Հայաստանի նախագծի աջակցությամբ ICARE հիմնադրամի կողմից: Դասընթացը վարել են Փենսիլվանիայի նահանգային համալսարանի և Վիրջինիա Թեք համալսարանի պրոֆեսորները:

Այն ներառում էր սննդագիտության ներածություն, սանիտարիա և սննդի միկրոկենսաբանություն, վերամշակման հսկում և թթվեցված սննդամթերք, HACCP համակարգ և սննդի պաշտպանության մոդուլները և ուղեկցվել է գործնական պարապմունքներով և վերամշակող ընկերություններ այցելություններով:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Ավելացնել արտադրության ծավալները

ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանն ընդունել է գյուղատնտեսական տեխնիկա արտադրող ռուսաստանյան մի շարք ընկերությունների ներկայացուցիչների պատվիրակությանը, որը գլխավորում էր Ռուսաստանի Դաշնության արդյունաբերության և առևտրի նախարարության գյուղատնտեսության, սննդի և ճանապարհա-շինարարական մեքենաշինության վարչության պետի տեղակալ Տիգրան Փարսադանյանը:



Հանդիպմանը ներկա էին նաև ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության, Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոնի (CARD), վարկային մի շարք կազմակերպությունների և այլ շահագրգիռ մարմինների ներկայացուցիչներ: «Հայաստանի գյուղատնտեսության ոլորտի այսօրվա կարևորագույն խնդիրներից մեկը գյուղտեխնիկայի վերագինումն ու արդիականացումն է: Զանգի պարտի առկա տեխնիկան մաշվածության պատճառով թույլ չի տալիս ապահովել ոլորտում բարձր քանակականություն, մենք այժմ կազմակերպում ենք հանդիպումներ տարբեր ընկերությունների հետ՝ նրանց արտադրանքին ավելի մանրամասն ծանոթանալու և մատչելի գներով ձեռք բերելու համար: Մեր նպատակն է՝ մինչև գարուն ունենալ գյուղտեխնիկա ներմուծող, որպեսզի սկսենք գյուղատնտեսական աշխատանքները», - նշել է նախարար Իգնատի Առաքելյանը՝ հավելելով, որ այս հարցում հայկական կողմը պատրաստ է ընկարկել և մանրամասն ուսումնասիրել յուրաքանչյուր առաջարկ: Հանդիպման ընթացքում նախարար Իգնատի Առաքելյանը հյուրերին է ներկայացրել Հայաստանում լիզինգային եղանակով գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերման նախագիծ, որը մասամբ սուբսիդավորվելու է պետության կողմից, որպեսզի վերջնական շահառուին գյուղտեխնիկան հասնի մատչելի գներով:

ՀՀ գյուղատնտեսության նախարարը նաև նշել է, որ ներկայումս Հայաստանում պետություն-մասնավոր հատված համագործակցությամբ, նախատեսվում է ստեղծել մեքենա-տրակտորային կայան (ՄՏԿ), որը կսպասարկի երկրի բոլոր մարզերի ֆերմերային տնտեսություններին: Նախարարի խոսքով՝ ՄՏԿ ստեղծման համար անհրաժեշտ գյուղտեխնիկայի ցանկն արդեն իսկ պատրաստ է և կտրամադրվի բոլոր շահագրգիռ ընկերություններին ուսումնասիրության և գնային առաջարկներ ներկայացնելու համար: «Եթե մենք կարողանանք ներմուծել բարձրակարգ գյուղատնտեսական տեխնիկա, ապա կկարողանանք 20-30 տոկոսով բարձրացնել ոլորտի արդյունավետությունը և մեր ներքին արտադրանքը դարձնել ավելի մրցակցային», - ընդգծել է Իգնատի Առաքելյանը:

Նախատեսվում է նաև Հայաստանում բացել ներմուծող ընկերությունների ներկայացուցչություններ և սպասարկման կենտրոններ, ինչպես նաև ֆերմերների համար կազմակերպել ուսումնական դասընթացներ: Դիտրերի տեղեկացմամբ՝ որոշ ռուսաստանյան ընկերություններ շահագրգռված են նաև Հայաստանում կազմակերպել տրակտորների հավաքում: Հանդիպման ընթացքում ռուսաստանյան ընկերությունների ներկայացուցիչները համառոտ ներկայացրել են իրենց գործարաններում արտադրվող տեխնիկան և հույս հայտնել, որ հայկական կողմին կհետաքրքրի առաջարկվող արտադրանքը:

ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանը նշել է, որ բոլոր ներկայացված առաջարկներն ու վաճառքի պայմանները հանգամանորեն կուսումնասիրվեն, և արդյունքները առաջիկայում կներկայացվեն ռուսական կողմին:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Համագործակցության հնարավորությունները գյուղողորտում

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում հրավիրվել էր ոռոգման ջրի մատակարարման հիմնախնդիրներին ու դրանց լուծման ուղիների ուսումնասիրմանը նվիրված քննարկում, որը վարում էր ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանը: Հանդիպմանը ներկա էին ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ Արսեն Զարությունյանը, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի տեղակալ Արթուր Խաչատրյանը և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի տեղակալ Նարեկ Գրիգորյանը, այլ ներկայացուցիչներ: «Ի կատարումն ՀՀ վարչապետի հանձնարարանի՝ այսօր կազմակերպել ենք քննարկում շահագրգիռ պետական գերատեսչությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, որի նպատակն է՝ քննարկել ոռոգման համակարգի բարելավմանը, ոռոգման ջրի հասանելիությանն ու մատչելիության ապահովմանն առնչվող խնդիրները, առաջիկայում ոլորտում նախատեսվող ծրագրերը, նախանշել այն համատեղ քայլերը, որոնք մենք կարող ենք ձեռնարկել ոռոգման բնագավառի զարգացման ուղղությամբ», - նշել է ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանը:

Նախարարը համառոտ ներկայացրել է քաղաքացիների կողմից հաճախ բարձրացվող հարցերը, որոնք հիմնականում վերաբերվում են ոռոգման ջրի հաշվառմանը և ջրամատակարարման ռեժիմի չպահպանմանը, ինչը հանգեցնում է բերքատվության կորստի:

Անդրադարձ է կատարվել որոշ համայնքների ոռոգելի հողատարածքներում ոռոգման նորմաների նորմատիվային ջրապահանջարկի գերազանցմանը: Այս և ոլորտում առկա այլ խնդիրների լուծման համար նախարարն ընդգծել է ոռոգման արդյունավետ եղանակների, մասնավորապես՝ կաթիլային համակարգի ներդրման կարևորությունը:

Հանդիպման ընթացքում արծարծվել են չօգտագործվող գյուղատնտեսական նշանակության հողերի վերաբերյալ տեղեկատվական շտեմարանի ստեղծման անհրաժեշտության, տեղեկատվական բազաների փոխանակման նպատակով շահագրգիռ պետական մարմինների ավելի սերտ համագործակցության հարցերը:

Ոռոգման ջրի հասանելիության ապահովման և ջրի կորուստների կրճատման նպատակով, ընդգծվել է հողերի խոշորացման անհրաժեշտությունը: Ոռոգման ոլորտի կառավարումն ավելի արդյունավետ կազմակերպելու նպատակով նախարար Իգնատի Առաքելյանը շեշտել է ըստ մարզերի՝ ոռոգելի հողատարածքների, ոռոգման ջրի համակարգերի գույքագրման կարևորությունը:

Ջրամատակարարման խնդիրները մինչև ոռոգման սեզոնի մեկնարկը հանգամանորեն ուսումնասիրելու և կարգավորելու նպատակով, քննարկման արդյունքում որոշվել է ստեղծել աշխատանքային խումբ՝ բոլոր շահագրգիռ պետական մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ, որը կուսումնասիրի առկա խնդիրները և առաջարկություններ կներկայացնի ՀՀ կառավարությանը:

Անտառային ռեսուրսների արդյունավետ կառավարման խնդիրները

ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանը հրավիրել էր խորհրդակցություն՝ անտառային ռեսուրսների արդյունավետ կառավարմանը, պահպանությանն ու պաշտպանությանն առնչվող խնդիրները քննարկելու նպատակով: Հանդիպմանը ներկա էին նախարարի տեղակալ Աշոտ Զարությունյանը, ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Հայաստան» ՊՈԱԿ-ի տնօրեն Մարտին Մաթևոսյանը, «Անտառային պետական մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Արամ Գյուլխանյանը, անտառային տնտեսությունների տնօրեններ, ոլորտի այլ պատասխանատուներ:

Անդրադառնալով ոլորտում այսօր առկա խնդիրներին՝ նախարարն ընդգծել է, որ հարկավոր է միջոցներ ձեռնարկել ոչ միայն անտառային ռեսուրսների պահպանման, այլև անտառային տարածքների ավելացման և զարգացման ուղղությամբ, որի նպատակով մշակվել է անտառային ոլորտի բարեփոխումների հայեցակարգ: Այդ համատեքստում Իգնատի Առաքելյանը կարևորել է ներդրումների իրականացումը, այդ թվում՝ նաև միջազգային կազմակերպությունների և մասնավոր հատվածի ներգրավմամբ: Նախարարը հանձնարարել է անտառային տնտեսությունների տնօրեններին ներկայացնել առաջարկություններ անտառային տարածքների զարգացման վերաբերյալ:

«ՊՐՈԴԵՍՊԵԿՏ - 2017»

Հայկական 12 գինեգործական ընկերությունների մասնակցությունը ցուցահանդեսին

Հայկական գինեգործական ընկերությունների պատվիրակությունը, ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Ռոբերտ Մակարյանի գլխավորությամբ, Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի աջակցությամբ մեկ միասնական տաղավարով մասնակցում է Մոսկվա քաղաքում ընթացող «Պրոդեքսպո 2017» ցուցահանդեսին, որի պաշտոնական բացման արարողությունը տեղի է ունեցել փետրվարի 6-ին:

Միջոցառմանը ողջույնի խոսքով հանդես է եկել ՌԴ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Եվգենի Գրոմիկին: Ռոբերտ Մակարյանի խոսքով՝ ցու-



ցահանդեսի առաջին օրն արդեն իսկ զգացվում է հետաքրքրություն հայկական գինիների նկատմամբ՝ հիմնականում մեզ համար թիրախային շուկա համարվող Ռուսաստանի կողմից:

Հայկական տաղավար են այցելել նաև ՌԴ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Օլեգ Եսայանը, ՌԴ-ում ՀՀ առևտրային ներկայացուցիչ Կարեն Ասոյանը, Ռուսաստանի տմեյների և փորձագետների միության նախագահ Արթուր Սարգսյանը:

Հայկական պատվիրակությունը ներկայացնում են 12 գինեգործական ընկերություններ՝ արտերկրյա սպառողին ներկայացնելով շուրջ 50 անուն հայկական գինիներ: Ցուցահանդեսը շարունակվել է մինչև փետրվարի 10-ը:

ԿՈՈՊԵՐԱՅԻՆ

ՄԻԱՍԻՆ ԿԱՐԵԼԻ Է ԿԱՅԱՑՆԵԼ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

«Ջրաշեն 1 գյուղատնտեսական ասոցիացիա» սպառողական կոոպերատիվն իրականացնում է բազմաճյուղ գործունեություն: Կոոպերատիվի նախագահ Լևոն Համբարձումյանի տեղեկացմամբ, Արմավիրի մարզում գործող կոոպերատիվի անդամները նախապատվությունը տալիս են դաշտավարության ու պտղաբուծության զարգացմանը, որոնք ավելի բնորոշ են տարածաշրջանին:

Կոոպերատիվը ձևավորվել է 2010 թ.-ին՝ Գյուղատնտեսական ասոցիացիաների ֆեդերացիայի աջակցությամբ: Կոոպերատիվի 62 անդամները տնօրինում են 118 հա հողատարածքների, որոնցից ավելի քան 82 հա-ը պտղատու և խաղողի այգիներ են: Հողի մշակության աշխատանքներն իրականացնում են կոոպերատիվի անդամների ունեցած տեխնիկայով, ինչի արդյունքում թեև ծառայությունները կատարվում են մատչելի գներով, այնուամենայնիվ, տեխնիկայի համալրման անհրաժեշտություն կա: Սերմացուն, դիզելային վառելանյութը, պարարտանյութերը և թունաքիմիկատները ձեռք են բերում համատեղ, ինչը նպաստում է դրանց գների մատչելիությանը: Այդ դեպքում իջնում է նաև արտադրանքի ինքնարժեքը: Լևոն Համբարձումյանի տեղեկացմամբ, համատեղ են իրականացնում նաև շուկաների որոնման և բերքի իրացման աշխատանքները: Կոոպերատիվի արտադրանքի հիմնական սպառողն առայժմ ներքին շուկան է, թեև արտադրվող բերքի քանակությունը կբավարարի նաև արտահանմանը: Իսկ այդ գործընթացի կազմակերպման համար առկա է սառնարանային ավտոմեքենաների անհրաժեշտություն, որը կոոպերատիվն իր սուղ միջոցներով չի կարող գնել: Բացի այդ, արտաքին շու-

կայի մարքեթինգային ուսումնասիրման վերաբերյալ կա նաև տեղեկատվության պակաս: Կոոպերացիան ունի նաև խոտինձիչի, բույսերի պաշտպանության միջոցառումների իրականացման համար սրկիչների անհրաժեշտություն: «Կոոպերատիվի 22 անդամներով համատեղ կազմակերպել ենք նաև չրի արտադրություն: Կուզենայինք ունենալ նաև մրգերի սառեցման հնարավորություն և ձմռան ամիսներին կազմակերպել նաև թարմ մրգի վաճառք», - նշում է Լևոն Համբարձումյանը: Ի դեպ, չրագործության տեխնոլոգիան ներդրել է Լևոն Համբարձումյանը՝ ուսուցանելով և իր փորձը փոխանցելով կոոպերատիվի անդամներին: Այժմ պատրաստում են բարձրորակ չիր: Ծրագրել են նաև ստեղծել մրգի վերամշակման արտադրամաս, որտեղ կարելի է պահածոյացնել արտաքին տեսքով առանձնապես աչքի չընկնող մրգերը, սակայն այստեղ ևս առկա է պետական աջակցության անհրաժեշտությունը, առանց որի ոչ մի նախաձեռնություն չեն կարող դարձնել իրականություն:

Ինչ վերաբերում է անասնաբուծությանը, ապա այստեղ ևս պետական աջակցության կարիքը կա: Կաթը մթերում են վերամշակող ընկերությունները, սակայն միշտ չէ, որ մթերման գները գոհացնում են կոոպերատիվի անդամներին: Բացի այդ, մթերումները տարերային բնույթ են կրում: «Ցանկալի էր ստեղծել կաթի մթերման կետ և կոոպերատիվի անդամների տնտեսություններում արտադրված կաթը հավաքել, և ինչո՞ւ չէ՝ հնարավորության դեպքում նաև վերամշակել տեղում», - ասում է կոոպերատիվի նախագահը, ապա հավելում, որ կենդանիների ցեղային հատկանիշների բարելավմամբ, տոհմային գործի կազմակերպման



անհրաժեշտություն կա, քանի որ կենդանիների մթերատվությունն իջել է:

Կոոպերատիվի անդամներով շատ ծրագրեր ունեն, սակայն այդ նախաձեռնությունների իրականացման համար առկա է ֆինանսական լուրջ ներդրումների անհրաժեշտություն:

«Մի փոքր աջակցության դեպքում կոոպերատիվը կարող է հասնել աննախադեպ արդյունքների», - համոզված են «Ջրաշեն 1 գյուղատնտեսական ասոցիացիա» սպառողական կոոպերատիվի անդամները: Չնայած առկա դժվարություններին՝ Լ. Համբարձումյանի կարծիքով՝ համատեղ աշխատանքը հնարավորություն է տալիս լուծել խնդիրները, հաղթահարել հիմնախնդիրները, ցանկացած իրավիճակի համար կայացնել արդյունավետ և ճիշտ որոշում, ինչը չի կարող կատարել անհատն ու միայնակ ֆերմերը:

ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԲՆԱԿԱՆ ՀԱՎԵԼԱՆՅՈՒԹԵՐՆ՝ Ի ՆՊԱՍՏ ՄԹԵՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ

«Մուկիվիտի անդամներով հարստացված, բնապահպանորեն մաքուր հավելանյութերը, որոնք պարտաստվում են գլաուկոնիտային կավերի հենքի վրա, պահանջվող չափաբաժիններով կերերին խառնելու դեպքում, նպաստում են խոշոր եղջերավոր կենդանիների, խոզերի, ճագարների, ինչպես նաև թռչունների մթերավորության ավելացմանը, քանի որ այդպիսով կենդանին ստանում է այն ամենը, ինչը կարող է ձեռք բերել բնության մեջ՝ ազատ պահվածքի պայմաններում»,- ասում է «Ս. Սերգոյան» ԱԶ ԿՐԻՍՏԵՆ ՍԱՄՎԵԼ ՍԵՐԳՈՅԱՆԸ, ով արդեն 7-րդ տարին է, ինչ զբաղվում է բնական հանքանյութերով հարստացված հավելանյութերի արտադրությամբ:

-Պրն. Սերգոյան, ինչո՞ւ որոշեցիք կազմակերպել մուկիվիտի անդամներով հարստացված հավելանյութերի արտադրություն: Ո՞րն էր առանցքային խնդիրը:

-Ուսումնասիրելով հանրապետության հանքային հարստությունները՝ եկա այն եզրահանգման, որ դրանց հումքից պատրաստված բնապահպանորեն մաքուր հավելանյութերը լայն կիրառություն կարող են ունենալ թե՛ անասնաբուծության, ձկնաբուծության և թռչնաբուծության, և թե՛ բուսաբուծության բնագավառներում: Դրանք կարող են կիրառվել նաև ընտանի կենդանիների, այդ թվում՝ շների և կատուների կերաբաժնում: Սկսեցի մշակել այդ հանքանյութերը, դրանց ավելացնելով այն բաղադրիչները, որոնք անհրաժեշտ են կենդանու օրգանիզմին, ինչպես օրինակ՝ լիզինը, կալցիումը, ֆոսֆորը և այլն, ինչպես նաև որոշակի վիտամիններ: Արտադրանքը փաթեթավորեցի և փոքր ծավալներով վաճառքն իրականացրեցի ՀՀ-ի և ԼՂՀ-ի անասնաբուծական դեղատներում: Այդպես դրվեց իմ փոքրիկ բիզնեսի հիմքը:

-Ինչպե՞ս դրանք ընդունվեցին սպառողների կողմից, արդյոք կային իրացման դժվարություններ:

-Սկզբնական շրջանում դժվարություններ, իհարկե, կային, քանի որ մեր ֆերմերները սովորույթ ունեն գնել նմանատիպ ներկրված ապրանքներ: Մինչդեռ, մեր արտադրանքն իր որակական հատկանիշներով ոչնչով չի զիջում ներկրվածին: Դժվարություններ առաջանում են նաև այն պատճառով, որ այդ պատրաստուկների դրական ազդեցությունը միանգամից չի կարող լինել տեսանելի, դրա համար ժամանակ է հարկավոր: Սակայն որոշակի ժամանակի ընթացքում արդյունքն ակնհայտ է դառնում, քանի որ զգալիորեն բարձրանում է կենդանիների մթերատվությունը: Խոզերի մոտ ավելանում է քաշաճը, ստացվում է խտացված և շատ համեղ միս, քանի որ բնական այդ հավելանյութերը կենդանու օրգանիզմից կլանում և հեռացնում են թունավոր նյութերը: Այդպիսով, մաքրվում է կենդանու աղետամոքսային համակարգը, վերջինս լինում է առողջ և հիվանդությունների նկատմամբ ցուցաբերում է մեծ դիմադրողականություն: Այլ կերպ ասած, կենդանին հանքային նյութերի պակաս չի զգում, ինչի արդյունքում, օրինակ, կովերի մոտ բարձրանում է կաթնատվությունը և կաթի յուղայնությունը, հավերի մոտ ավելանում է ձվատվությունը, մեծանում են ձվերի չափերը:

-Իսկ ի՞նչ հավելանյութեր եք արտադրում:

-Սկզբում պատրաստեցի կենդանիների ունիվերսալ միներալային բաղադրություն, որը կոչվեց «Bentovit», որը պարունակում է նաև լիզին: Արտադրության մեջ օգտագործվում են բենտոնիտային և գլաուկոնիտային կավեր: Այնուհետև, դարձյալ գլաուկոնիտային կավերի հենքի վրա, պատրաստեցի «Kremnevit»՝ կոչվող բնական հավելանյութը: Կրեմնին էլեմենտը, մասնակցելով նյութափոխանակության գործըն-

թացին, ապահովում է օրգանիզմի բնականոն կենսագործունեությունը: Այս էլեմենտի պակասի դեպքում չի յուրացվում օրգանիզմին անհրաժեշտ 106 էլեմենտներից 74-ը: Այս նյութը տարիներ առաջ Ստոկհոլմում արժանացել է «Կյանքի կարևորագույն էլեմենտ» պատվավոր կոչմանը, քանի որ այն միաժամանակ ապահովում է ուղեղի և մարմնի մյուս անդամների կապը, ուղեղից եկող ազդանշանները փոխանցվում են այս նյութի միջոցով: Դրա պաշարը պետք է անընդհատ ավելացվի կենդանու օրգանիզմում, որպեսզի վերջինիս կենսագործունեությունը լինի բնականոն: Աղաձիհների և այլ թռչունների համար արտադրվում է բնական հանքանյութերով և վիտամիններով հարստացված հատիկավորված կերեր: Կարևոր հանգամանքներից մեկն էլ այն է, որ այդ նյութերը հեշտությամբ յուրացվում են օրգանիզմի կողմից, քանի որ առկա է դրանց նկատմամբ պահանջարկը:

-Ի՞նչ հեռանկարային ծրագրեր ունեք:

-Ցանկալի կլինեն բնապահպանորեն մաքուր արտադրանքն արտահանել ՌԴ: Բացի այն, որ այդ հավելանյութերը հնարավորություն են տալիս արդյունավետ դարձնել անասնաբուծությունը, դրանք լայն կիրառություն ունեն նաև բուսաբուծության բնագավառում: Բնական հանքանյութերը կարող են օգտագործվել աղուտ հողատարածքների բարելավման նպատակով, ջերմատներում, ինչպես նաև ձկնաբուծության բնագավառում: Դրանք նպաստում են ջրի որակական հատկանիշների բարելավմանը, ինչպես նաև ջրային բուսատեսակների փարթամ աճին: Այդ հանքանյութերը կարող են կարգավորել նաև հողերի ջրային ռեժիմը, կիրառվում են նաև համակցված կերերի արտադրության, ակվարիումային ձկնաբուծության և սենյակային ծաղկաբուծության մեջ:

-Ունե՞ք հումքի ձեռքբերման հետ կապված խնդիրներ:

-Ո՛չ, քանի որ դրանք կարելի է ձեռք բերել ուղղակի բնության մեջ, հանքավայրերում: Կուզենայի, որպեսզի պետության կողմից խթանվեր, խրախուսվեր, և ինչո՞ւ չէ՝ նաև սուբսիդավորվեր բնապահպանորեն մաքուր սննդամթերքի արտադրությանը նպաստող այս հավելանյութերի արտադրությունը, այդ նպատակով տրվեին կոնկրետ պատվերներ: Արտադրության ծավալի հետ կապված՝ խնդիրներ չունենք, առաջնահերթը իրացման կայունացումն ու կարգավորումն է: Այդ դեպքում կընդլայնվի արտադրությունն ու արտադրատեսականին, կստեղծվեն նոր աշխատատեղեր:



Էջի նյութերը՝ Նեյի Սահակյանի

ԳՈՐԾԱՐԱՐ ԿԱՆԱՅՔ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՃԱՆԱՊԱՐՀ

«Ես միշտ ապրել եմ գյուղում, առանց հողի չեմ պարկերացնում իմ կյանքը: Հողը ինձ համար նույնքան կարևոր է, որքան ընտանիքս ու զավակներս»,- ասում է Արմավիրի մարզի Առաքաշեն գյուղի բնակչուհի Անահիտ Շահգեղյանը:

Առաջին հայացքից երբեք չես պատկերացնի, որ տիկին Անահիտն ամբողջ տարին զբաղվում է գյուղատնտեսական աշխատանքով, իր և ամուսնու ձեռքով պատրաստված ջերմոցներում մշակում է լոլիկ, վարունգ, սմբուկ ու տաքդեղ: Դժվարությունների մասին չի սիրում խոսել, չի էլ ժխտում, որ դժվարություններ շատ են եղել, հիմա էլ կան: Ամուսնու հետ գյուղատնտեսական աշխատանքներով սկսել է զբաղվել 90-ականների սկզբներին. ընտանիքը պահելու համար, մասնագիտությունից զատ, նաև պետք էր այլ աշխատանքով զբաղվել: Մասնագիտությամբ գյուղատնտես է, բույսերի պաշտպան: «90-ականներին մի կարճ ընթացք նաև դպրոցում քիմիայի ուսուցչուհի եմ աշխատել, բայց սերը հողի նկատմամբ հաղթեց, վերադարձա իմ մասնագիտությանը», - հիշում է տիկին Անահիտը: Տիկին Անահիտը ոչ միայն զբաղվում է հողագործությամբ, այլև փորձում է մասնագիտական խորհուրդներով օգտակար լինել իր համայնքի և հարակից մի քանի գյուղերի բնակիչներին: Երկար տարիներ աշխատում է գյուղաջակցության մարզային կենտրոնում, որպես գյուղատնտեսության խորհրդատու: Կնոջ համար դժվար մասնագիտություն է, մանավանդ այս պայմաններում. պետք է և սեփական կարիքները հոգալ, և հասցնել լինել այն հողատարածքներում, որտեղ խորհրդատվության կարիք կա:

«Սխալվելու իրավունք չունեմ, ես էլ բույսերի բժիշկ եմ աշխատում, երբ դաշտեր եմ գնում, և տեսնում եմ հույսով սպասող գյուղացիներին, աշխատում եմ ոչ մի դեպքում չսխալվել: Վերջին տարիներին գլուխ են բարձրացրել բույսերի նոր վանաստուներ ու հիվանդություններ, որոնց դեմ պայքարելու համար ժամանակին խորհրդատվություն տալը շատ կարևոր է», - նշում է նա:

Ազատ ժամանակ տիկին Անահիտը գրեթե չունի: Օրը պետք է հասցնի այնպես բաժանել, որ և ընտանիքի հետ լինի, և հարազատներին ու ընկերներին չնեղացնի: Իսկ հարցիս, թե կյանքի որ ժամանակահատվածը կուզենար վերապրել, տիկին Անահիտը մի պահ լռում է, հետո ժպտալով պատասխանում. «Որքան տարօրինակ է՝ 90-ականները: Զիշտ է, դժվար տարիներ էին, բայց այդ տարիները նաև օգնեցին, որ հասկանայի, որպես կին կամ մարդ ինչ եմ ուզում կյանքից, ինչի եմ ընդունակ, ինչի կարող եմ հասնել: Դժվար տարիներ էին, պատերազմ, երեխաները փոքր էին, խառը ժամանակներ, երբ չես կարողանում կողմնորոշվել... Այն ինչին հիմա հասել եմ ծանր աշխատանքի արդյունք է, երբեք չհուսահատվելու, եղածով բավարարվելու արդյունք», - պատմում է նա:

Տիկին Անահիտը մի երազանք ունի, որ ամեն անգամ, երբ գնում է հերթական խորհրդատվությունը տալու՝ հոգնածության ու հիասթափվածության փոխարեն, տեսնի իր աշխատանքից ու կյանքից գոհ գյուղացիների, ովքեր ոչ թե քարից հաց քամողի հոգեբանությամբ են մտնում իրենց հողատարածքները, այլ հաղթողի հպարտությամբ:

Սահականուշ Արդյան
Արմավիրի ԳԱՄԿ

ՓԼՈՒՋՎՈՒՄ Է ԿԱՆԱՆՑ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

Մարիամ Սենեքերիմյանը Վայոց ձորի մարզում կանանց «Արենի» ֆերմերային ակումբի նախագահն է: Շուրջ 10 տարի է, ինչ ակումբի անդամները մասնակցում են «Կանաչ արահետ» ՀԿ-ի կազմակերպած ուսուցողական սեմինարներին՝ ձեռք բերելով մասնագիտական գիտելիքներ և հմտություններ՝ բուժիչ խորաբույսերի, թեյերի և համեմունքների հավաքման, չորացման և փաթեթավորման գործընթացում: Կանայք զբաղվում են նաև մրգերի և հատապտուղների վերամշակմամբ:

Կանանց խումբը մասնագիտացել է նաև օշորակների, մուրաբաների և առանց շաքարաջրի չրերի արտադրությունում: Չորացնում են նաև ալոճ և մասուր: Մարիամ Սենեքերիմյանի տեղեկացմամբ, կանայք նախապատվությունը տալիս են օրգանիկ գյուղատնտեսության զարգացմանն ու վերջինիս հումքի վրա՝ արտադրության կազմակերպմանը: Կանանց ակումբը բաղկացած է 14 անդամներից, որոնց թիվս ավելանում է, քանի որ նրանք հաճույքով են աշխատում համատեղ, ունեն համընդհանուր հետաքրքրություններ և զբաղվածություն: Արտադրում են նաև մրգային գինիներ և օղի, ինչպես նաև կազմակերպելով հատապտուղների հավաք՝ դրանցից պատրաստում են մուրաբաներ, որոնք մեծ պահանջարկ են վայելում սպառողների շրջանում: Կանայք մշակել են նաև մարինադների, ինչպես նաև թթուների պատրաստման բաղադրատոմսեր, դրանցից ամենայուրահատուկը թթվեցված բոխին է: Ի դեպ, գործարար կանայք պատրաստում են նաև ազգային ավանդական քաղցրավենիքներ, որոնցից առանձնանում է խաղողի դոշաբով սուջուխը: Ինչ վերաբերում է իրացմանը, ապա Մարիամի տեղեկացմամբ, բարձրորակ արտադրանքն անմիջապես իրացվում է, և որևէ դժվարություն չունեն: Պարբերաբար մասնակցում են նաև «Կանաչ արահետ» ՀԿ-ի կազմակերպած ամենամյա ցուցահանդեսներին, որտեղ հնարավորություն է ընձեռվում ոչ միայն ցուցադրել իրենց արտադրանքը, շփվել սպառողների հետ, կարծիքներ փոխանակել, այլև իրականացնել վաճառք:

«Ակումբում ընդգրկված կանայք ունեն իրենց հողատարածքներն ու այգետարածքները. նրանք վերամշակում կամ չրերի են վերածում նաև իրենց սեփական արտադրանքը: Ամենայուրահատուկ արտադրանքը լոլիկի, մասուրի և վարդի մուրաբաններն են, որոնք աչքի են ընկնում թե՛ գրավիչ ապրանքային տեսքով, և թե՛ համային հատկանիշներով», - տեղեկացնում է ակումբի ղեկավարը: Այդպիսով լուծվում է կանանց հանրօգուտ աշխատանքի ապահովման խնդիրը, քանի որ Արենի գյուղում, որտեղ գործում է ակումբը, գրեթե աշխատատեղեր չկան: Կանանց «Արենի» ֆերմերային ակումբի գործունեության արդյունքում թե՛ն փոքրիկ, սակայն նյութական բարիքներ են ստեղծվում:

Նեյի Սահակյան



ԿՐԹԱԿԱՆ

ԵԱՏՄ ԵՐԿՐՆԵՐԻ ՓՈՐՁՆ ՈՒ ԿԻՐԱՎՈՂ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ



Քիզնեսի և գիտության փոխգործակցությանը նպաստելու, հայաստանյան ագրարային ոլորտի ներկայացուցիչներին ԵԱՏՄ երկրների փորձին ու կիրառվող տեխնոլո-

գիաներին ծանոթացնելու նպատակով, Ագրարային համալսարանի հյուրն էր Եվրասիական գյուղատնտեսական տեխնոլոգիական հարթակի համակարգող-քարտուղար, Ակադեմիկոս Ի.Գ. Պետրովսկու անվան Բոյանսկի պետական համալսարանի Կենսատեխնոլոգիաների և էկոլոգիայի նորարարական գիտակրթական կենտրոնի տնօրեն Իրինա Նամը:

Նախ համալսարանի ղեկավար Ա. Թարվերդյանի, ապա պրոռեկտորների, դեկանների, ամբիոնների վարիչների և ՀՀ գյուղատնտեսության նախարարության

գիտական կենտրոնների տնօրենների հետ հանդիպման ընթացքում Իրինա Նամը ներկայացրեց Եվրասիական գյուղատնտեսական տեխնոլոգիական հար-

թակի գործունեության հիմնական ուղղությունները՝ բույսերի սելեկցիա և հողագործություն, անասնաբուծություն, ինովացիոն տեխնոլոգիաներ և փոքր բիզնեսի զարգացում:

Բանախոսն անդրադարձավ նաև Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների ագրոարդյունաբերական համալիրի նորարարական զարգացման խնդիրներին ու հնարավոր լուծումներին, նորարարությունների ներդրման հիման վրա, ԱԱՀ կայուն զարգացման միջազգային փորձին, ոլորտում տեխնոլոգիաների և նորարարությունների փոխանակման ու համագործակցության հեռանկարներին և ագրարային հատվածի զարգացման գործում դրանց դերին:

Նախատեսված ծրագրի համաձայն՝ հյուրի հետ հանդիպման հաջորդ երկու օրերի ընթացքում Ագրարային համալսարանում տեղի ունեցավ նաև խմբային հանդիպում-քննարկումներ հետևյալ թեմաներով՝ Անասնաբուծություն (պատվաստումներ, ախտորոշում, լեյկոզ, բրուցելոզ), անասնաբուծություն (այծաբուծություն և այլ խոշոր եղջերավոր անասուններ), բույսերի սելեկցիա և բուսաբուծություն (բերքի հեռավար կառավարում, սելեկցիա), հատապտուղների արտադրություն և բերքատվություն:

www.anau.am

ԾՐԱԳԻՐ

ԸՆԴՀԱՆՎԵԼ Է ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Վերջերս «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» (ՓՄՁ ԶԱԿ) հիմնադրամի գործադիր տնօրեն Լևոն Մնացականյանն ամփոփել է 2016 թ. աշխատանքը: Ըստ նրա՝ ՓՄՁ պետական աջակցության 2016 թ. ծրագրի շրջանակում ՀՀ 2016 թ. պետական բյուջեից հատկացվել է 143 մլն ՀՀ դրամ: Բոլոր իրականացվող ծրագրերում ակտիվ ներգրավվածություն են ունեցել Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի գործընկեր միջազգային կազմակերպությունները:



«Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը վարկային երաշխավորությունների տրամադրման, սկսնակ գործարարների ձեռներեցության, ոլորտային աջակցության, գործարար տեղեկատվական, խորհրդատվական և ուսուցողական աջակցության, տեղական տնտեսական զարգացման ուղղություններով մոտ 4300 ձեռնարկության տրամադրել է շուրջ 8900 աջակցություն: Աջակցության 96%-ի հասցեատերերը մարզերի գործող և սկսնակ ՓՄՁ-ներն են», - նշել է Լ. Մնացականյանը: Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի վարկային երաշխավորությունների ծրագրով ֆինանսական աջակցություն է ստացել 18 գործող և սկսնակ ՓՄՁ: ՀՀ բոլոր մարզերում իրականացված «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության» 10 ծրագրի շրջանակներում իրականացված գործարարությամբ զբաղվելու անվճար դասընթացներին և խորհրդատվություններին մասնակցել է 152 սկսնակ գործարար: Ստեղծվել է 22 նոր ձեռնարկություն:

Տեղական տնտեսական զարգացման ծրագրի շրջանակներում 5 համայնքային փնջերում (կլաստերներ) վերլուծվել են 19 գյուղական համայնքների մրցակցային առավելությունները և բացահայտվել է 82 համայնքային տնտեսական զարգացման նախաձեռնություն, որոնք իրականացվել են «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության» ծրագրի շրջանակում: Բացի այդ, ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ իրականացվող «Գործընկերություն» հանուն գյուղական համայնքների բարգավաճման» ծրագրի «Փոքր ենթակառուցվածքների զարգացում» բաղադրիչի շրջանակում, 2016 թ. ընթացքում ավարտվել են 8 ենթակառուցվածքային ծրագրեր, ինչի շնորհիվ հիմնվել են նոր այգիներ, ոռոգելի են դարձել անջրդի հողեր:

Կոտայքի մարզի Բջնի համայնքում կառուցվել է ոռոգման նոր խողովակաշար, Տավուշի մարզի Զորական համայնքում ստեղծվել է ոռոգման համակարգ, Լոռու մարզի Կուրթան համայնքում կառուցվել է հացահատիկի գտման կայան, Տավուշի մարզի Ենոքավան համայնքում ավարտվել է տուրիզմի զարգացման ինֆորմացիոն կենտրոնի շինարարությունը: Սոխի, արևածաղկի և եգիպտա-

ցորենի ցանքն արդյունավետ կազմակերպելու նպատակով ճշգրիտ ցանքի սերմնացան է տրամադրվել Զորական և Բագրատաշեն համայնքներին: Արագածոտնի մարզի Արագածավան համայնքում հիմնվել է Գյուղատնտեսական և անասնաբուժական սպասարկման կենտրոն: 11 սկսնակ ՓՄՁ-ների

ջրանոցների, ջերմոցների և սառնարանային տնտեսությունների հիմնման նպատակով տրամադրվել են դրամաշնորհներ՝ սարքավորումների և նյութերի տեսքով: «Գյուղատնտեսության զարգացման նպատակով իրականացվող գյուղատնտեսական տեխնիկայի ներկրման և տրամադրման ծրագրի շրջանակում, 2016 թ.-ին Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը ներմուծել և պատվիրատու համայնքներին է տրամադրվել 5 միավոր գյուղտեխնիկա», - շեշտել է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի գործադիր տնօրենը:

«Անցնող տարում ընդլայնվել է համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ համատեղ ծրագրերի մշակման և իրականացման ուղղությամբ: Շարունակվել է ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ «Գործընկերություն հանուն գյուղական համայնքների բարգավաճման» ծրագրի իրականացումը, սկսվել է «Տեղական արտադրության զարգացում և տեղական ապրանքանիշերի առաջմղում» Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի և Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության համատեղ ծրագրի 2-րդ փուլը, «Ձեռնարկատիրական աշխատանք Հայաստանի երիտասարդության համար» Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի և ՄԱԿ-ի արդյունաբերության զարգացման կազմակերպության համատեղ ծրագիրը», - տեղեկացրեց Լևոն Մնացականյանը: Նա նշել է, որ Ռուսաստանի, Բելառուսի ՓՄՁ ոլորտի աջակցության կազմակերպությունների հետ ստորագրված գործակցության հուշագրերի շնորհիվ շուտով ԵԱՏՄ անդամ այդ երկրների և Հայաստանի միջև տեղի կունենա ՓՄՁ աջակցության լավագույն փորձի փոխանակում: Հատկապես կարևոր է ՌԴ-ում մեկնարկած «Բիզնես նավիգատոր» ծրագրի տեղայնացումը:

Տարեվերջին ՓՄՁ ԶԱԿ-ի գործադիր տնօրեն Լևոն Մնացականյանը ստորագրել է ԵՄ կողմից 1 միլիոն 123 հազար եվրո դրամաշնորհի պայմանագիրը: Ծրագիրը պետական համաֆինանսավորմամբ իրականացվելու է Լոռու, Սյունիքի և Արմավիրի մարզերում: Մեկնարկած ծրագրի նպատակն է՝ այդ մարզերում խթանել ձեռնարկատիրությունը, զբաղվածությունը և զարգացնել ենթակառուցվածքները:

www.smednc.am

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

ԱՅԳԵՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

Համայնքների ղեկավարների կապարած աշխատանքները մշտապես պետք է ուղղված լինեն ազգաբնակչության հոգսը թեթևացնելուն: Այս նպատակին է ծառայեցնում իր աշխատանքը Արարատի մարզի Այգեստան համայնքի ղեկավարն ու աշխատակազմը: Գյուղը հիմնադրվել է 1828 թվականին՝ պարսկահայերի կողմից, ովքեր եկել են Խոյ և Սալմաստ գավառներից, անվանակոչել են՝ Այազլի, Այասլու, իսկ 1949 թ. վերանվանվել է Այգեստան: Համայնքն այսօր ունի 3025 բնակիչ, ովքեր հիմնականում զբաղվում են գյուղատնտեսությամբ՝ բանջարաբուսության, մշակաբույսերի աճեցմամբ, խաղողագործությամբ: Կան նաև եզդի ընտանիքներ, որոնց եկամտի հիմնական աղբյուրը գոյանում է ոչխարաբուծությունից:



Այսօր համայնքը ղեկավարում է Սոկրատ Հովսեփյանը: Ծնվել է մանկավարժի ընտանիքում: Ավարտել է Հաշվիչ մեքենաների տեխնիկումը, Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտը՝ զուգահեռ ԵՊՀ-ի բանասիրական, այնուհետև՝ 1979 թ. իրավաբանական ֆակուլտետները:

Աշխատել է Մերգելյան ինստիտուտում՝ տեխնիկից մինչև առաջատար ինժեներ, «Հայինանտադրություն»-ում, ՀՀ գլխավոր դատախազությունում՝ դատախազ, 2008 թ. ընտրվել է Այգեստան համայնքի գյուղապետ: Տարիների ընթացքում կատարված աշխատանքների

մասին է պատմում համայնքի ղեկավարը:

«Պարոն Հովսեփյան, այս տարիների ընթացքում, ինչ աշխատանքներ են կատարվել և ինչպիսի հիմնախնդիրներ են լուծվել:

-2008 թ. համայնքի ղեկավար ընտրվելուց հետո, անմիջապես ձեռնամուխ եղա գյուղապետարանի շենքի վերանորոգման աշխատանքների իրականացմանը՝ սեփական միջոցների, բարերարների շնորհիվ, շուրջ 41 մլն. դրամի ներդրում կատարվեց: Խորհրդային տարիներից մեր գյուղում խմելու ջրի խնդիր կար, ջրամատակարարում գրեթե չի եղել, իսկ խողովակները փտած էին: Այդ նույն տարում կարողացանք անցկացնել 1 կմ երկարությամբ խմելու ջրի ջրագիծ: Այնուհետև Արտաշատի ԶՕԸ-ն հատկացրեց 4 կմ երկարությամբ խողովակներ, աշխատանքները գյուղապետարանի աշխատակիցների ուժերով իրականացրեցինք այնպես, որ ամբողջ ջուրը հավասարապես բաշխվում է բոլորին: Ավարտել ենք նաև գյուղի գազաֆիկացման, աշխատանքները, ինչպես նաև լուծվել է ոռոգման ջրագծի հարցը: Համայնքում չկար աղբահանություն, այսօր այդ հարցն էլ է լուծված:

«Համայնքում ինչ կրթամշակութային օջախներ են գործում, ինչպես է կազմակերպվում բնակչության ազատ ժամանակը:

-Ունենք դպրոց, մանկապարտեզ, մշակույթի տուն, մարզադահլիճ, որտեղ բնակչությունը հնարավորություն ունի մարզվելու: Գործում է պարի խումբը, չնայած անվճար մշակութային խմբակներ են բացվել, սակայն հետաքրքրությունը երեխաների ու ծնողների շրջանում պասիվ է: Համայնքում գործում է մանկապարտեզ, որն այսօր վերանորոգված է, հաճախում են 120 երեխաներ: Իմ բյուջեի 52 %-ը տրամադրվում է մանկապարտեզի պահպանմանը:

«Ինչ կիսատ աշխատանքներ կան, որոնք պետք է իրականացվեն առաջիկայում:

-Գյուղում հին եկեղեցի կար, բայց 90-ականներից մինչև հիմա հնարավորություն չեղավ շինարարական աշխատանքներ իրականացնել, հուսով եմ այս 4 - 5 տարվա ընթացքում կկարողանանք նոր եկեղեցին կառուցել, նոր հիմքն արդեն դրված է: Վերջերս ավագանու նիստում որոշում կայացրեցինք դիմել վարչապետին՝ գյուղի նախկին հիվանդանոցի հարցը պարզաբանելու համար: Հուսով եմ խնդիրը դրական լուծում կստանա: Գյուղում գրեթե ամբողջովին խճապատվել են փողոցները, մնացել է մի քանի փողոց, նախատեսել ենք դրանք ևս առաջիկայում խճապատել:

- Գյուղացուն իր տնտեսությունը զարգացնելու համար ինչ է անհրաժեշտ:

-Նախ նշեմ, որ որակյալ կոնյակն ամեն տեղ էլ արժեք ունի: Հայաստանի բրենդը եղել է կոնյակի արտադրությունը: Սովետական տարիներին հայկական կոնյակագործությունը, գինեգործությունը բերում էր մի բյուջեի՝ 40 տոկոսը: Նախորդ տարի խաղողի բերքի գումարը ժամանակին չտրվեց, շուրջ 30-40 հա չթաղվեց, ցրտահարվեց, անցած տարի բերքը պակաս է եղել: Եթե ուզում ենք, որ մարդիկ զբաղվեն բիզնեսով և գյուղացին զարգացնի իր տնտեսությունը, առաջնահերթ պետք է գյուղացուն տալ մատչելի վարկեր: Կառավարության օգնությունն այն կլինի, որ գյուղացուն մատչելի վարկեր տրվեն՝ տնտեսության մեջ ներդնելու համար: Վերջերս վարչապետը եկել էր Արտաշատ: Կարծում եմ, նրա ձեռնարկած աշխատանքները կնպաստեն համայնքի գյուղատնտեսության զարգացմանը:

Մանվել Կիրակոսյան



ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ՆՈՐԱԾԻՆ ԽՈՋԿՈՐՆԵՐԻ ԽՆԱՄՔԸ ԵՎ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ
ԿԱԹՆԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Խոզերի կենսաբանական առանձնահատկություններից հատկապես բազմապրոցությունը և վաղահասությունը հնարավորություն են տալիս խոզաբուծությանը զբաղվող գյուղացիական տնտեսություններին կարճ ժամանակահատվածում ստանալ և իրացնել հարաճուն պահանջարկ ունեցող խոզի միս: Այդ նպատակով խոցերի նորմալ զարգացման և անկորուստ աճեցման համար անհրաժեշտ է ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք կարող են հիմք հանդիսանալ նրանց հեղափոխական քաղաքական ձևավորման համար:

Առողջ և նորմալ խոցերի ստանալու նպատակով անհրաժեշտ է հղի մերուններին ծնելուց 5-7 օր առաջ տեղափոխել մաքուր և ախտահանված կացոցներ: Մերունի ծինը սովորաբար տևում է 5-6 ժամ /երբեմն ավելի/ և չսպասելով ծնի ավարտին՝ առաջին ծնված խոցերին 30-40 րոպե հետո թողնում են մոր կուրծքը ծծելու: Նորածին խոցերին սովորեցնում են որոշակի պտուկներին, իսկ ավելի թույլ խոցերին հատկացնում են որովայնի առաջնային պտուկները, որոնք ավելի կաթնառատ են և կաթի յուղայնությունն ավելի բարձր: Տարվա ցուրտ ամիսներին նորածին խոցերները լրացուցիչ ջերմության կարիք են զգում, որի համար կիրառում են էլեկտրատաքացուցիչներ, ուկրաինական ճառագայթման լամպեր, փոքրիկ տնակներ՝ արկղից պատրաստված և այլն: Ծննդյան առաջին ամսում խոցերները մայրական կաթից օգտվում են օրական շուրջ 24 անգամ:

Խոցերի կերակրման հետագա աճը և առողջական վիճակը կախված է նրանց կերակրումից, ջրից օգտվելուց և մերունի խնամքից: Մասնավորապես խոզերի կերաբաժնի ճիշտ կազմումը և ջրից օգտվելը բարձրացնում է մերունների կաթնատվությունը, հետևապես՝ նաև խոցերի աճի էներգիան: Մեկ լիտր խոզի կաթի մեջ առկա են այնքան սննդանյութեր, որքան 2 լիտր կովի կաթում: Միջին հաշվով, ամբողջ լակտացիայի ընթացքում մերունը տալիս է օրական 6-10 լիտր կաթ: Ուշ շափանը ձմռան և վաղ գարնան ծնված խոցերները 5-30 օրական հասակում հաճախ հիվանդանում են անեմիայով /սակավարյունությամբ/, օրգանիզմում շատ անհրաժեշտ երկաթի պակասության հետևանքով, որն անհրաժեշտ է հեմոգլոբինի մոլեկուլի ձևավորման համար: Նորածին խոցերների օրգանիզմին երկաթի պաշարը չի անցնում 50 մգ-ից, իսկ օրական պահանջը կազմում է շուրջ 7 մգ: Մայրական կաթով խոցերներն ստանում են 1 մգ: Այսպիսով՝ 5-7 օրականից խոցերների օրգանիզմում ի հայտ է գալիս երկաթի պակաս, խախտվում է հեմոգլոբինի

նի առաջացումը, զարգանում է անեմիա, որի հետևանքով: Այսպիսի խոցերների մոտ իջնում է աճն ու զարգացումը, ընկնում է տարբեր հիվանդությունների նկատմամբ օրգանիզմի դիմադրողականությունը: Որպեսզի կանխարգելի անեմիայի առաջացումը, խոցերներին 3-4 օրական հասակում տալիս են երկաթի գլիցերոֆոսֆատ՝ փոշու ձևով: Լավագույն միջոց է համարվում կարմիր կավը, որն իր մեջ պարունակում է երկաթի աղ: այն քիչ քանակությամբ դրվում է խոցերների համար նախատեսված կերամանի առանձին բաժանմունքում:



Պայքարի արդյունավետ եղանակ է նաև ֆերոգլյուկինի կամ ֆերոգլեքսի ներմկանային ներարկումը: Նորածին խոցերներին սկզբնական շրջանում պահում են մոր հետ միևնույն կացոցում: Սկսած 5-7 օրականից՝ սովորեցնում են հատի-



Խոցերի ամորձատում

կային կերերին՝ գարի, ցորեն, եգիպտացորեն բոված վիճակում: Խմելու համար ջուրը /եռացրած/ տրվում է 5 օրական հասակից: Մերունի կաթի անբավարարության դեպքում, որը նկատվում է խոցերների 5-10 օրական հասակից նրանց սովորեցնում են կովի կաթին որն իր կազմով համեմատաբար մոտ է խոզի կաթին: Կովի կաթին խոցերներն ընտելանում են դժվարությամբ, որը սկզբում տրվում է շատ քիչ քանակությամբ 7 օրականից սկսած օրական 3-4 անգամ: Զտված կաթը տրվում է խոցերներին 15-20 օրական հասակից մինչև մերունից անջատելը: Մեկ խոցերին կաթնային շրջանում տրվում է 5-6 լ անքաշ կաթ, 15-25 կգ զտած կաթ, որը սկսվում է 100-150 գ-ից մինչև 700 գ և ավելի՝ մեկ օրվա ընթացքում: Օրական տրվող կաթի և զտած կաթի քանակությունը կարելի է խոցերներին տալ մաձնի կամ այլ կերերի հետ խառնած վիճակում: Զոր հատիկային կամ խտացրած կերերը խոցերներ-

ի կերամանի մեջ միշտ պետք է լինեն, իսկ կաթնային կերերը տրվում են առանձին՝ օրական 3-4 անգամ: Խոցերների չոր կերակրումն ավելի ցանկալի է, քան՝ թրջած վիճակում, քանի որ խոնավ կերերը շուտ են թթվում, որոնցով կերակրման դեպքում առաջանում են մարսողության խանգարումներ: Ելնելով տնտեսության արտադրական ուղղությունից՝ ծնված բոլոր արու խոցերները ենթակա են ամորձահատման, քանի որ նրանք ավելի լավ են աճում և տալիս են բարձրորակ մսեղիք: Ամորձահատումը կատարում են սկսած 2 շաբաթակա-

նից մինչև մերունից անջատելը: Եթե խոցերների անջատումը կատարվում է 2 ամսական հասակում, ապա յուրաքանչյուր գլխին ծախսվում է 15-20 կգ խտացրած կերախառնուրդ: Խոցերներին վաղ հասակից սովորեցնում են նաև հյութալի կերերով կերակրմանը: այն ավելի նպատակահարմար է սկսել կարտոֆիլից, որը պարտադիր եփելուց հետո լավ տրորվում /այլուրե/ և կաթով խառնելուց հետո, 8-10 օրականից տրվում է կերակրման: Խորհուրդ է տրվում 10-12 օրականից սովորեցնել գազարի, կերի և շաքարի ճակնդեղի կերակրման, այն էլ՝ միայն մանրացրած և հում վիճակում: Աճեցման 2 ամսվա ընթացքում յուրաքանչյուր գլխին կերակրման համար ծախսվում է 5-10 կգ հյութալի և 0.5-1.5 կգ կանաչ զանգված: Խոցերների աճի և զարգացման վրա շատ լավ ազդեցություն է ունենում մերունների հետ արածեցումը, որի դեպքում հանքային նյութերով լրացուցիչ կերակրման և անեմիայի դեմ մշակումների անհրաժեշտություն չի զգացվում:

Հնարավորության դեպքում A և D վիտամինների լավագույն և առատ աղբյուր է ձկան յուղը, որը տրվում է խոցերներին՝ 5-7 մգ կովի կաթի հետ խառնած վիճակում: Խոցերների համար հատկապես առաջին երեք շաբաթների ընթացքում, կարևոր նշանակություն ունի ծնարանում ջերմաստիճանի կայուն պահպանումը, որը պետք է լինի 18-22 °C-ի սահմաններում:

Հանրապետությունում խոցերների անջատումը մերունից կատարվում է տարբեր հասակներում՝ 40, 45 և 60 օրականում, դա կախված է կերային հնարավորություններից: Առավել ընդունելի է 60 օրական անջատումը, երբ նրանց կենդանի զանգվածը հասնում է 17-20 կգ, այսպիսի մատուցվող հետազայում դրսևորում է բարձր քաշաճ և մսային որակական հատկություններ:

Մշակումը՝ ԳԱՀԿ

ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐ ՄՆԵՂԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱԳԱ
ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻՆ

Մերոյա իրականությունում սննդի անվտանգության հարցն օրհասական է, բարձրորակ մասնագետները՝ պահանջված: Առկա խնդիրների լուծմանը կարող են մեծապես նպաստել Ագրարային համալսարանի Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնի 30 ուսանողները, ովքեր հաջողությամբ ավարտելով «Պարենային անվտանգության համակարգերի կառավարում» Հայաստանում առաջին կրթական ծրագիրը, արժանացան ԱՄՆ Փենսիլվանիայի նահանգային համալսարանի և Վիրջինիա Թեք համալսարանի հավաստագրերի:



Վերջերս հավաստագրերի հանձնման արարողությանը ներկա էին ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանը, ՀԱԱՀ ռեկտոր Արշալույս Թարվերդյանը, ԱՄՆ Միջազգային զարգացման գրասենյակի հայաստանյան առաքելության տնօրեն Դեբորա Գրիգորյանը և այլ հյուրեր: Հայ երիտասարդները հնարավորություն են ունեցել մեկամսյա ժամանակահատվածում ստանալու սննդագիտության և սննդի անվտանգության ոլորտում ամենավերջին գիտական հետազոտությունների արդյունքների վրա հիմնված գիտելիքները, որոնք վերջիններիս են հաղորդել միջազգային ճանաչում ունեցող փորձագետները, ովքեր և նախապես կազմել էին դասընթացի ուսումնական պլանը: «Ժամանակի պահանջներին համապատասխան կրթություն տալու համար, անհրաժեշտություն էր առաջացել որոշ փոփոխություններ մտցնել նաև Ագրարային համալսարանի ուսումնական ծրագրերում: Այդ գործում դրական արդյունքներ կարող էինք ակնկալել՝ հատկապես համագործակցելով միջազգային կառույցների հետ: Պետք է գոհունակությամբ նշենք, որ ԱՄՆ Միջազգային զարգացման գրասենյակը հնարավորություն ստեղծեց կապ հաստատել Միացյալ Նահանգների Փենսիլվանիայի նահանգային համալսարանի և Վիրջինիա Թեք համալսարանի հետ: Կարճ ժամանակում մշակվեց խտացված ծրագրերի մի մոդուլ, որը հունվար ամսվա ընթացքում իրականացվեց Ագրարային համալսարանում: Հիմա արդեն, տեսնելով մեր ուսանողների ձգտումներն ու ձեռք բերած գիտելիքները, այս հնարավորությունը պետք է օգտագործենք համալսարանի մյուս մասնագիտություններում ևս նման սխեմայով կրթություն կազմակերպելու համար», -միջոցառման ժամանակ նշեց ՀԱԱՀ ռեկտոր Ա. Թարվերդյանը:

Մեկամսյա դասընթացն ավարտողներն այսուհետ պահանջված մասնագետներ են և հավաստագրերի հանձնման միջոցառման ժամանակ արդեն աշխատանքի հրավեր ստացան Սննդի անվտանգության պետական ծառայության ներկայացուցչի կողմից:

Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնի հավաստագրային այս ծրագիրը կյանքի է կոչվել «Նորարարություն հանուն գյուղատնտեսական կրթության և վերապատրաստման» ծրագրի միջոցով: Դասընթացը նախատեսված էր ICARE-ի, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի, Վիրջինիա Թեք և Փենն Ստեյթ համալսարանների միջև 2014 և 2016 թվականներին կնքված փոխըմբռնման հուշագրերով:

www.anau.am

ՎԵՐՍԿՍՎԵԼ ԵՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ՝
ԽՈՐՀՐԳԱՏՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ENPAR/ԵՀԳԳԶԾ Տեխնիկական օժանդակություն ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը պայմանագրի «Ուսուցման և զարգացման ծրագրի պետական խորհրդարանական ծառայությունների համար» բաղադրիչի շրջանակներում, օրերս Արարարի ԳԱՄԿ-ում տեղի ունեցավ սեմինար-դասընթաց, որը ֆինանսավորվում է ԵՄ և իրականացվում ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից:

Սեմինար-դասընթացում ընդգրկված թեմաներն էին՝ «Խոշոր եղջերավոր կենդանիների կերակրումը և պահվածքը», «Ծնի ընդունումը կովերի մոտ», «Կերի բազայի կազմակերպումը», «Կովերի արհեստական սերմնավորումը», «Կովերի արտադրության պահվածքը», (ուսուցանող՝ Տիգրան Չիտյան (ՀԱԱՀ)):

Ինչ վերաբերում է բույսերի պաշտպանությանը, ապա այս ոլորտը ներառել էր «Վնասատուների դեմ ինտեգրացված պայքարը», «Խաղողի վազի հիմնական հիվանդությունները», «Ֆիլոքսերան, տարածման պատմությունն ու ներկայիս վիճակը Հայաստանում»: Վերը նշված թեմաները ներկայացրեց ուսուցանող՝ գյուղատնտեսական գիտությունների թեկնածու, ՀԱԱՀ Այգրոտեխնոլոգիայի և բույսերի պաշտպանության ամբիոնի վարիչ Արմենակ Տեր-Գրիգորյան: ՍՈւսուցման ավարտին տեղի ունեցավ ակտիվ քննարկումներ ներկայացված թեմաների շուրջ, ինչպես նաև մասնակիցների հուզող հարցերին ուսուցանողների կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

Արարարի ԳԱՄԿ

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է...

ԴԵՂՁԵՆՈՒՑ ՄԻՆՉԵՎ ՆԵԿՏԱՐԵՆԻ

Դեղձենին պատկանում է վարդագգիների ընտանիքի սալորայինների ենթաընտանիքին: Միրգը հիմնականում ներկրում էին Հունաստանից: Հավանաբար դեղձենու հայրենիքը հյուսիսային Չինաստանն է, որտեղ հանդիպում են բնության մեջ աճող բոլոր տեսակները: Ըստ բուսահնէաբանների՝ դեղձենին մշակվել է Չինաստանում՝ ավելի քան 3000 տարի առաջ: Այդ երկրում դեղձը համարվում է առողջության և երկարակեցության խորհրդանիշ, թեև դեղձենու կյանքը շատ կարճ է՝ ընդամենը 10-15 տարի: Միրգը հայտնի է դարձել Հռոմում՝ Ք.ա. 1-ին հարյուրամյակում, բերվել է Պարսկաստանից և անվանվել է պարսկական սալոր (*Prunys persika*): Դեղձենու առաջին առանձնահատկությունը կապված է ծաղիկների կառուցվածքի և, համապատասխանորեն, փոշոտման եղանակի հետ:

Ծաղիկները միայնակ են, հազվադեպ՝ զույգերով, նստադիր կամ կոթունով, բաց գույնից մուգ վարդագույն (շատ նման են նշենի նախնային):

Դեղձենու ծաղիկները լինում են երկու տեսակի՝ զանգականման և վարդանման: Զանգակատիպ ծաղիկների թերթիկները մանր են՝ նեղ օվալաձև, մուգ վարդագույն: Այս տեսակի ծաղիկների առջևն են վարսանդը դուրս են գալիս դեռ չբացված ծաղիկ կոկոնից և տեղի է ունենում ինքնափոշոտում: Վարդանման ծաղիկն ունի կլորավուն կամ լայն օվալաձև, խոշոր, բաց վարդագույն թերթիկներ: Դեղձենու երկրորդ և երրորդ առանձնահատկությունը կապված է պտղի հետ: Ամիրոփվաթ Ամասիացին գրել է. «Ամենաօգտակարն այն տեսակն է, որի կորիզը հեշտությամբ է անջատվում պտղամսից: Ավելի օգտակար է դեղձի չիրը: Այն ուտելուց առաջ հարկավոր է թրջել, բայց 10 հատից ավել չի կարելի ուտել: Դրա փասակար ազդեցությունը չեզոքացնում է վարդի մուրաբան: Իսկ փոխարինել կարող է ծիրանը»:

Վերջին տարիներին ամենասիրելի մրգերի ցանկում իր պատվավոր տեղն է գրավել նեկտարինը: Դեղձի համեմատ այն մի մեծ առավելություն ունի՝ հարթ է: Միրգն իր անվանումը ստացել է nekter բառից: Հետաքրքիրն այն է, որ յուրահատուկ փոշոտման հետևանքով սովորական դեղձենին կարող է տալ նեկտարին, նույն էլ և հակառակը, նեկտարինի ծառը՝ դեղձ: Նեկտարինի տեսակները նման են դեղձին, դրանք լինում են դյուր անջատվող (խոսակցական՝ կծպովի) և դժվար անջատվող, գույնը նույնպես՝ սպիտակի տոնից մինչև կարմիր ու դեղին: Նեկտարինն ունի մոտ 5 դարյա պատմություն: 17-րդ դարում այս հրաշալի մրգի արդեն 6 տեսակ գոյություն ուներ: Մրգի օգտակար հատկություններից կարելի է առանձնացնել միայն այն, որ 500 գր նեկտարինի մեջ կա 267 կկալորիա, իսկ իր միկրոէլեմենտներով և վիտամիններով այն կարող է մրցել անգամ նոսն հետ: 0.5 կգ նեկտարինը պարունակում է 2.4 մգ երկաթ, 17 մգ կալցիում, 100 մգ ֆոսֆոր, ինչպես նաև Ա, Ե, Դ և Ց վիտամիններ: Ասում են, որ նեկտարինը ստացվել է դեղձի և սալորենու խաչաձևման եղանակով: Նեկտարինը դեղձի տեսակ է: Այն առաջանում է բույսի ինքնափոշոտման ընթացքում. նույն ծառի վրա միաժամանակ կարող են աճել թավշապատ և հարթ



մակերես ունեցող ու ձեռքով հեշտությամբ բաժանվող պտուղները: Կա կարծիք, որ բույսի անվանումը կապված է հունարեն «նեկտար» բառի հետ՝ անմահական ըմպելիք: Նեկտարինի մասին առաջին հիշատակումն արվել է 1616թ. Անգլիայում: 20-րդ դարի վերջին մշակվել են նեկտարինի տեսակներ, որոնց գեղեցիկ, տոնական տեսք ունեցող պտուղների քաշը հասնում էր 200 գրամի: Նեկտարինների մեջ հաճախ են հանդիպում քաղցր սերմ ունեցող պտուղներ, որոնք կենսաքիմիական բաղադրությամբ նման են քաղցր նշին: Դառը սերմերը մեծ կիրառում ունեն դեղագործության բնագավառում: Այսօր հայտնի նեկտարինենու մոտ 6 տեսակներն ավելի կայուն են հիվանդությունների և վնասատուների հանդեպ, քան դեղձենին: Կատարվում են աշխատանքներ՝ բույսի ցրտադիմացկունությունը բարձրացնելու ուղղությամբ: Նեկտարին արտահանող երկրներն են՝ հարավսլավոնական պետությունները, Իտալիան, Հունաստանը, Թունիսը և այլն:

Ոչ խիստ մոտեցման դեպքում նեկտարին են կոչվում նաև հարթ մակերեսով և ձեռքով չբաժանվող պտուղները: Որպես կանոն, նեկտարինը պարունակում է ավելի քիչ շաքարներ, քան դեղձը և ավելի հյութալի է: Նեկտարինը գոյացել է դեղձի բողբոջի բնական գենետիկ փոփոխության կամ այլ կերպ՝ մուտացիայի հետևանքով: Էներգետիկ արժեքը մոտ 50 կկալ է, այն աչքի է ընկնում օգտակար նյութերի բազազանությամբ: Դեղձի յուղը օգտագործվում է մազաբուսության առողջացման, հոնքերի, թարթիչների, եղունգների և մաշկի խնամքի համար: Դեղձի յուղն հազվադեպ է առաջացնում ալերգիկ ռեակցիաներ, խորհուրդ է տրվում ռիմիտի, հայմորիտի դեպքում, հետմիդրահատական շրջանում: Յուղը կանխարգելում է ինֆեկցիայի տարածումը դեպի թոքեր, բրոնխներ, կաթեցրեք 10-15 կաթիլ յուրաքանչյուր քթանցքին: Տոնգիլիտի դեպքում կատարում են ողողումներ յուղով:


Դեղձի յուղը օգտագործվում է մանկաբուժության մեջ, քիթ-կոկորդի հիվանդությունների, մաշկային ցանի դեպքում. խորհրդակցեք մանկաբույժի հետ:

Լիլիթ Գասպարյան

ՊԱՀՔԻՆ ԸՆԴԱՌԱՋ....

Մեր ժամանակակից սերունդը պահեցողություն ասելով, թերևս, հասկանում է մսեղենից, կաթնեղենից և հավկիթեղենից հրաժարում: Սա, սակայն, պահքի մասին վերջին ժամանակների և քաղքենի դասակարգի ըմբռնումն է. սկզբից այդպես չի եղել:

Ըստ Աստվածաշնչի՝ պահեցողությունը սգի և ցավի մի շրջան է, ինքնագրկանք կամ ինքն իրեն տրված կամավոր պատիժ, որն իրագործվում էր որոշ ժամանակ ուտելուց և խմելուց, ինչպես նաև ՀԱՃՈՒՅՔԻՅ ամբողջովին հրաժարվելով: Կարևորը՝ վերջին հանգամանքն է, այսինքն՝ նաև հաճույքից հրաժարվելը, քանզի պահքը և հաճույքն իրար հակադիր երևույթներ են, և, հետևաբար, պահեցողությունը, որին ընկերանում են նաև խաղը, ուրախությունը և պարը, երևակայել անհնար է: Ուրեմն՝ կրոնական նպատակով ինքն իրեն որևէ գրկանք պարտադրելը պահեցողություն է: Սկզբնական շրջանում պահքից անբաժան էին լացն ու կոծը և սրանց արտահայտման արտաքին ձևերը՝ հագուստ պատռելը, քորձ հագնելը, մոխրի վրա նստելը և այլն: Առհասարակ այս ամենը կիրառվում էր որևէ ընկերության կամ խմբի կողմից՝ վշտադիմ և հոգեպես ցնցող տխուր իրադարձությունների դեպքում: Պահքից անբաժան էր ԱՂՈԹՔԸ: Ս. Գրքում որտեղ էլ պահքի մասին հրահանգ է տրվում, միաժամանակ հանձնարարվում է



աղոթքը: Երբ մարդիկ պահեցողություն են անում, միաժամանակ կիրարկում են նաև աղոթքը: Ս.Գրքում ասված է. «Բարի են աղոթքները՝ պահեցողություններով»:

Պահեցողություն էին անում նաև որևէ կարևոր նպատակի հաջողության համար:

Պահքը, սակայն, հետզհետե ավելի կիրառելի դարձավ իբրև ապաշխարանքի նշան և արտահայտություն: Սրա ամենաբացահայտ օրինակը գալիս է նինվեացիներից: Երբ նրանք Հովհան մարգարեից իմացան, թե քաղաքն իրենց ամբարշտության պատճառով պիտի կործանվի, «նինվեացի մարդիկ հավատացին Աստծու պատգամին, պահեցողություն հայտարարեցին և մեծից մինչև փոքրը քորձ հագան: Պահքի ներկա ձևին, այսինքն՝ համադամ կերակուրներից և մսեղենից հրաժարվելու սովորությանը, առաջին անգամ հանդիպում ենք Դանիելի մարգարեական գրքում, ուր ասված է. «Այդ օրերին ես՝ Դանիելս, երեք շաբաթ սուգի մեջ էի: Լավ հաց չկերա, միս և գինի չստալ իմ բերանը, յուղով չօծվեցի, մինչև որ վերջացան երեք շաբաթները»:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՍԿՍՎԵԼ Է 2017 թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

«ԱԳՐՈԼՐԱՏՈՒ» թերթ

1 համարի գինը՝ 120 դրամ
6 ամսվանը՝ 1980 դրամ
1 տարվանը՝ 3960 դրամ

«ԱԳՐՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ամսագիր

1 համարի գինը՝ 1350 դրամ
6 ամսվանը՝ 4050 դրամ
1 տարվանը՝ 8100 դրամ

Ըաժանորդագրությունը իրականացնում են՝

- ✓ Գյուղատնտեսության աջակցության համրապետական և մարզային կենտրոնները
- ✓ «Դայվիտաթ»,
- ✓ «Դայմամուլ»,
- ✓ «Պրեմ-Անտաշե»

կազմակերպությունները



Հարգելի քաղաքացիներ,

Տեղեկացնում ենք, որ Գյուղատնտեսական հանրագիտարան ձեռք բերելու համար կարող եք զանգահարել 011 52 48 34 հեռախոսահամարով:

Հանրագիտարաններն առկա են նաև Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոններում, ինչպես նաև՝ «Նոյան Տապան» և «Բուկինիստ» գրատներում:



ԱԳՐՈԼՐԱՏՈՒԼ
AGRONEWS

Հասցեն՝ Երևան, Մամիկոնյանց 39ա, հեռ.՝ 23-21-02, ֆաքս՝ 23-03-80
E-mail: asrc@cln.am կայք http://www.asrc.am

ՀԻՄՆԱԴԻՐ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
«Գյուղատնտեսության աջակցության համրապետական կենտրոն» ՓԲԸ

Տնօրեն

Գլխավոր խմբագիր և
համարի պատասխանատու՝

Ա. ՎԱՀՄԱՅԱՆ

Լ. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

Տպաքանակ՝ 1100
2 տպագրական մամուլ
գրանցման թիվ՝ 01 Մ՝000226
դասիչ՝ 69105
պատվեր թիվ՝ 5
ստորագրված է տպագրության 14.02.2017 թ.
տպագրվում է ԳԱՀԿ տպարանում,
Երևան, Մամիկոնյանց 39ա